

**Որակի հոչակագիր Ծառայությունների ծավալի ինդեքսներն ըստ
ծառայությունների տեսակների**

0 Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Ծառայությունների ծավալի ինդեքսներն ըստ ծառայությունների տեսակների
0.2	Ոլորտը	Ծառայություններ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժին Բաժնի պետ Անահիտ Հարությունյան Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0010, Հանրապետության պողոտա, Կառավարական 3 շենք Հեռախոս՝ +374 11 587 623 Էլ. փոստ՝ trade@armstat.am ; info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Հիմնական նպատակն է տրամադրել արդիական տեղեկատվություն ծառայությունների ծավալի ինդեքսի վերաբերյալ: Ցուցանիշի հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 20-ական թվականներից:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: «Ծառայությունների շրջանառության ինդեքսն ըստ ծառայությունների տեսակների» ցուցանիշը կիրառվում է ծառայությունների բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշի հաշվարկման համար աղբյուր է հանդիսանում վիճակագրական հաշվետվությունով իրավարանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ամսական պարբերականությամբ

		հավաքվող տեղեկությունները ծառայությունների ծավալի վերաբերյալ, ինչպես նաև Արմատատի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնից ստացվող գների ինդեքսները:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	<p>«Շրջանառության ինդեքսներն ըստ ծառայությունների տեսակների» ցուցանիշի դինամիկայի վերլուծության համակարգում կարևոր տեղ է գրավում ինդեքսային մեթոդը: Ցուցանիշի հաշվարկման համար կիրառվում են երկու ինդեքսներ.</p> <ul style="list-style-type: none"> • ծառայությունների արժեքային ծավալի ինդեքսը (ընթացիկ գներով), • ծառայությունների ֆիզիկական ծավալի ինդեքսը (համադրելի գներով): <p>Ծառայությունների արժեքային ծավալի ինդեքսն ընթացիկ գներով բնութագրում է ծառայությունների ծավալի փոփոխությունն երկու գործոնների հաշվին՝ գնի փոփոխության և իրացված ծառայությունների քանակի փոփոխության պայմաններում:</p> <p>Այս ինդեքսը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանի ծառայությունների արժեքային ծավալը բազիսային ժամանակաշրջանի</p> <p>ծառայությունների արժեքային ծավալի (ընթացիկ գներով) հետ հարաբերելու միջոցով, այն է՝</p> $I = (O_1 / O_0 \times 100), \text{ որտեղ}$

		<p>O_1 , O_0 – ծառայությունների արժեքային ծավալներն են համապատասխանաբար հաշվետու և բազիսային ժամանակաշրջանի համար ընթացիկ գներով:</p> <p>Ծառայությունների ֆիզիկական ծավալի ինդեքսը ցույց է տալիս, թե ինչպես է փոփոխվում ծառայությունների ծավալը՝ գնի փոփոխության ազդեցությունը բացառելով:</p> <p>Ծառայությունների ֆիզիկական ծավալի ինդեքսը հաշվարկելու համար համեմատվում է հաշվետու և բազիսային ժամանակաշրջանների ծավալները համադրելի գներով, այսինքն՝ միևնույն ժամանակաշրջանի գներով.</p> $I_{\Phi O} = (O_1 / I_{\Delta} \times 100) / O_0$, որտեղ <p>$I_{\Phi O}$ –ծառայությունների ֆիզիկական ծավալի ինդեքսն է,</p> <p>O_1, O_0 –ծառայությունների արժեքային ծավալներն են համապատասխանաբար հաշվետու և բազիսային ժամանակաշրջանի համար ընթացիկ գներով,</p> <p>I_{Δ}–սպառողական գների ինդեքսն է (ՄԳԻ) ծառայությունների համար՝ հաշվետու ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի հետ համեմատած:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>Հիմնական հասկացություններ</p> <p>Ծառայությունները հանդիսանում են օգտագործողների պատվերով արտադրողների կողմից իրականացվող տարաբնույթ գործունեություն, որի արդյունքում սովորաբար փոխվում է ծառայությունները օգտագործող միավորների վիճակը: Ծառայությունների արտադրությունը և դրանք օգտագործողներին մատուցումը սովորաբար իրականացվում են զուգընթաց և այս գործընթացները միմյանցից անբաժանելի են:</p> <p>Բոլոր տեսակի ծառայությունների հաշվառումն իրականացվում է այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մատուցվել են ծառայությունները, անկախ վճարումից՝ հաշվեգրման սկզբունքով:</p> <p>Ծառայությունների ընդհանուր ծավալը ներառում է բոլոր</p>

	<p>տեսակի հարկերը, բացառությամբ ավելացված արժեքի և այլ անուղղակի հարկերը:</p> <p>Ծառայությունների ծավալի մեջ չեն ներառվում այն տոկոսադրույքները, տույժերն ու տուգանքները, որոնք առաջացել են ծառայությունների դիմաց չվճարման կամ վճարումները ժամանակին չկատարելու հետևանքով:</p> <p>Ծառայությունները, որպես կանոն, չեն կարող ընդունել նյութական օբյեկտների ձև, որոնց վրա տարածվում է սեփականության իրավունքը: Ծառայություններն ենթակա չեն փոխադրման և շատ դեպքերում դրանց մատուցման համար անհրաժեշտ է ծառայություն մատուցողի և դրա օգտագործողի անմիջական համագործակցությունը (օրինակ, կացության ծառայությունները, վարսավիրանոցների ծառայությունները և այլն): Նմանատիպ ծառայությունների առք ու վաճառքի գնորդական պահանջարկը բավարարվում է անմիջականորեն ծառայությունների մատուցման պահին:</p> <p>Որոշ գործունեության տեսակներ սովորաբար դիտվում են որպես ծառայություններ, սակայն գործնականում ունեն ապրանքի հատկանիշներ, դրանց վրա տարածվում է սեփականության իրավունքը: Օրինակ՝ տեղեկատվական և մշակութային արտադրանքի արտադրության և տարածման հետ կապված գործունեությունը (տարբեր թեմաներով տեղեկատվական ծրագրերի ստեղծումը, նորությունների թողարկումների պատրաստումը, խորհրդատվական բնույթի նյութերի, ծրագրային ապահովման մշակումը, կինոնկարների, երաժշտական ծրագրերի ստեղծումը և այլն), բացառությամբ պոլիգրաֆիական և գրառված կրիչների բազմազան հետ կապված գործունեությունը: Նշված ճյուղերի արտադրանքը հիմնականում պահվում է նյութական կրիչների վրա՝ թղթի, մագնիսական ժապավենների, սկավառակների և այլն, դրանց նկատմամբ կարող է սահմանվել սեփականության իրավունք: Նմանատիպ ծառայությունների ծավալն արժեքային արտահայտությամբ, ընթացիկ գներով, դիտվում է որպես նույն ժամանակահատվածում մատուցված և սպառված ծառայություններ:</p>
--	--

		<p>Ծառայությունների ծավալի ցուցանիշը հաշվարկվում է համաձայն Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի երկրորդ խմբագրության (տես՝ https://www.arlis.am/Annexes/5/2020_N1077hav.doc հղումը) և ներառում է Դ «Կացության և հանրային սննդի կազմակերպում», Կ «Փոխադրումներ և պահեստային տնտեսություն», Զ «Տեղեկատվության և կապ», Է «Ֆինանսական և ապահովագրական գործունեություն», Ը «Անշարժ գույքի հետ կապված գործունեություն», Թ «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն», Պ «Վարչարարական և օժանդակ գործունեություն», Ր «Կրթություն», Ց «Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում», Ճ «Մշակույթ, զվարճություններ և հանգիստ», Կ «Սպասարկման այլ ծառայություններ» բաժինները:</p> <p>Աշխարհագրական ընդգրկումություն</p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը և Երևան քաղաքը:</p>
2 Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Ամսական
2.2	Հրապարակման ամսաթիվը	Ամսական առաջին հրապարակումը՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 35/36-րդ օրը:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան վիճակագրական ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան
3 Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Ծառայությունների ծավալի հաշվարկման համար ամսական պարբերականությամբ հաշվետվություններ հավաքվում են ՀՀ մարզերի և ք. Երևանի այն տնտեսավարող սուբյեկտներից (իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից), որոնց նախորդ տարվա շրջանառությունը գերազանցել է 24 մլն դրամը: Նախորդ տարվա արդյունքներով 24 մլն դրամից պակաս տարեկան շրջանառություն ունենալու դեպքում

		<p>դադարեցվում է ռեսպոնդենտներից հաշվետվությունների հավաքումը: Հաշվետվությունների հավաքման դադարեցումը չի վերաբերում այն տնտեսավարող սուբյեկտներին, որոնք, գործունեության տեսակով պայմանավորված, չեն կարող համարվել Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ: Վերջիններս ներկայացնում են հաշվետվություն՝ անկախ ծառայությունների տարեկան ծավալի չափից:</p> <p>Իսկ ֆինանսական և տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայությունների վերաբերյալ ամսական տեղեկատվությունը ստացվում է վարչական լիազորությունների տիրապետող պետական մարմիններից:</p> <p>Տվյալների բազայի արդիականացման համար հիմք է ծառայում բիզնես ռեգիստրի մշտապես արդիականացվող բազան:</p> <p>Բաժնի մշտադիտարկման դաշտում գտնվող տնտեսավարող սուբյեկտների տարեկան բազան համեմատվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական տվյալների բազայի հետ և կատարվում է բացակայող տվյալների համալրում:</p>
3.2	Անճշտության աղբյուրները	Դիտարկման ընթացքում առաջացող անճշտությունների աղբյուր կարող է հանդիսանալ տեղեկություն սրամադրողների կողմից ոչ լիարժեք պատասխանների սրամադրումը: Սահմանված ժամկետում վիճակագրական տվյալների չներկայացման դեպքում կրկնվում են նախորդ ժամանակաշրջանի տվյալները:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Պատասխանների մակարդակը կազմում է մոտ 97%:
4 Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 2005թ.-ը ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: Սկսած 2005թ.-ից ցուցանիշը ներկայացվում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված Եվրոպական համայնքների վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների

		դասակարգչի՝ NACE հիման վրա), որով պայմանավորված վերահաշվարակվել է 2001-2004թթ. ցուցանիշները: 2010թ.-ից կիրառվում է SԳՏԴ խմբ.2-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա է համադրելիություն այլ աղբյուրներից ստացվող վիճակագրության հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	<p>Առաջին անգամ հրապարակված տվյալներն որակվում են նախնական: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով:</p> <p>Նախնական տվյալները վերանայվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված ճշգրտումների և այլ ստուգաճշտումների հիման վրա: Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:</p> <p>Իրականացվում են տարեկան ճշգրտումներ և համալրումներ բաժնի մշտադիտարկման դաշտում գտնվող տնտեսավարող սուբյեկտների տարեկան բազայի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տվյալների բազայի համեմատության արդյունքում:</p>
5 Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	<p>Հրապարակումներ</p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույց (հայերեն և ռուսերեն):</p> <p>«Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն):</p> <p>«Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» տարեկան վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն):</p> <p>«Հայաստանը թվերով» տարեկան վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն):</p> <p>«Հայաստանի Հանրապետության առևտուրը և ծառայությունները» վիճակագրական ժողովածու, հրապարակվում է 5 տարին մեկ (հայերեն, ռուսերեն, անգլերեն):</p>

		<p>Տվյալների բազա</p> <p>http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</p> <p>Կայք</p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն, ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. http://www.armstat.am/am/?nid=82:</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	<p>Ռեսպոնդենտները վիճակագրական հաշվետվությունները կարող են ներկայացնել ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Պահպանվում են ն՝ թղթային և՝ էլեկտրոնային եղանակով ստացվող հաշվետվությունները: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են Իրավաբանական անձանց համար. ա/ իրավաբանական անձի ծածկագիրը բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/ իրավաբանական անձի լրիվ անվանումը, ե/ կազմակերպական-իրավական ձևը, զ/ իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, է/ գործունեության հիմնական տեսակը, ը/ ծառայությունների ծավալը (առանց ավելացված արժեքի և այլ անուղղակի հարկերի), թ/ աշխատողների միջին տարեկան թվաքանակը: Անհատ ձեռնարկատերերի համար. ա/ անունը, ազգանունը, բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/ բնակության վայրը, ե/ պետական գրանցման վայրը (եթե չի համընկնում բնակության վայրի հետ), հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, զ/ գործունեության հիմնական տեսակը, է/ ծառայությունների ծավալը (առանց ավելացված արժեքի և այլ անուղղակի հարկերի),</p>

		ը/ աշխատողների միջին տարեկան թվաքանակը:
5.3	Փաստաթղթավորումը	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով` https://www.armstat.am/file/model/am/18.1.pdf :
5.4	Այլ տեղեկատվություն	Ծառայությունների ծավալի հաշվարկման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը գետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի` 2020 թվականի մայիսի 11-ի` «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 10-Ն և թիվ 13-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին», թիվ 14-Ն որոշմամբ հաստատված հավելված 3-ում և 4-ում: Մեթոդաբանական պարզաբանումներ են առկա նաև «Հայաստանի վիճակագրական տարեգրքում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում, ինչպես նաև համապատասխան թեմատիկ հրապարակումներում:
6 Լրացուցիչ փաստաթղթավորում		
		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: